## ԿԵԱՆՔԸ ԺԱՌՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Նոյեմբեր–Դեկտեմբերի ընթացքին տեղի ունեցան հետեւեալ երեկոյթները.—

8 Նոյեմբեր, Կիրակի, ժապաւէնի ցուցադրութիւն։

28 Նոյեմբերին, Շաբաթ օր, տեղի ունեցաւ հրապարակային բացառիկ դասախօսութիւն մը հանդիսասրահին մէջ, ի ներկայութեան Գերշ. Սրբազաններու, Միաբան Հայրերու և մեծ թիւով ժողովուրդի։ Դասախօսն էր, Սիոն լերան Տորմիսիոն Աբբայարանէն և Հռոմի Համալսարանի Փրոֆէսէօրներէն Հայր Դոնիէլ Կէլսի, նիւթ ունենալով «Տպաւորութիւններ Թրքահայաստանէն»։ Հոգշ. Հայրը, որ երկիցս առիթը ունեցած էր շրջելու Թուրքիոյ արեւելեան նահանգները — երբեմնի Արեւմտեան Հայաստանը — խօսեցաւ Անգլերէն լեզուով և լուսապատկերներով (slide) ցուցադրեց Աղթամարի, Վանայ լճի և Անիի շրջանի տեսարաններ ու պատմական յուշարձաններու մնացորդներ։ Հետաքրքրական էին մանաւանդ բացառաբար գրեթէ անեղծ մնացած Աղթամարի Ս. Խաչ փառաւոր եկեղեցիի տեսարանները ցուցադրող սլայտները։

19 Դեկտեմբերին, Շաբաթ, խօսեցաւ Ամերիկայէն հիւրաբար ժամանած Տիար Թիւզանդ Կռանեան։ Դասախօսութիւնը տեղի ունեցաւ Վարժարանի լսարանին մէջ։ Ներկայ էին Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան, Տեսուչ Արժ. Տ. Ներսէս Աւագ Քհնյ. Ճէպէճեան, ուսուցիչներ և աշակերտներ։ Գալիֆորնիաբնակ յարգելի գրագէտ–բանաստեղծն ու ազգային գործիչը խօսեցաւ «Սփիւռքի ներկայ գոյավիճակը և Ամերիկահայութիւնը» նիւթին շուրջ, որմէ ետք հանգամանօրէն պատասխանեց աշակերտներուն կողմէ իրեն ուղղուած զանազան հարցումներուն։

Այս շրջանին, կարելի կանոնաւորութեամբ շարունակուեցաւ նաեւ շաբաթական ուսուցման բարոյախօսութեանց շարքը։ Հետեւեալները խօսեցան տարբեր նշանակուած նիւթերու շուրջ.—

3 Նոյեմ., Գշ. — Տիար Աբրահամ Սիւրդիւքեան — «Ընթերցանութեան ուժը»։

16 Նոյեմ., Բշ. — Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Գալեան — «Կեանքի նպատակ մը ունենալ»։

23 Նոյեմ., Բշ. — Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան — «Հոգեւոր արիութիւն»։

30 Նոյեմ., Բշ. — Հոգշ. Տ. Վանիկ Արդ. Մանկասարեան — «Մաքրասիրութիւն»։

7 Դեկտ., Բշ. — Տիար Վարդան Տէր Վարդանեան — «Բարեկամ ուրիշին – Ընկերասիրութիւն»։

15 Դեկտ., Գշ. — Տիար Սահակ Գալայճեան — «Զոհողութեան ոգին»։

21 Դեկտ., Բշ. — Հոգշ. Տ. Արփիար Արդ. Տէմիրճեան — «Յարգանք մեծերուն – Բարեկրթութիւն»։

28 Դեկտ., Բշ. — Տիար Վահէ Գալայճեան — «Հնազանդութիւն օրէնքին»։



digitised by A.R.A.R.@